ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔ

Արմավիրի մարզ
գ. Տարոնիկ, 1148
հեռ. 093.97.06.18

N -230

16. 11. 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ՄԱՐԹԵՎՈՍՅԱՆ

Կից Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Տարոնիկ համայքի 2018թվականի համայնքի ղեկավարի կողմից նոյեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումները:

Առդիր՝ 6 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԽԼՂԱԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 նոյեմբեր 2018թ.

Թիվ-63

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Արմավիրի մարզի Տարոնիկ հայնքում մկնանման կրծողների դեմ պայքար իրականացնելու մկնդեղի բաշխման, գրավչանյութի պատրաստման և օգտագործման անվտանգությունը ապահովելու պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղար Մխիթար Ավագյանի վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԽԼՂԱԹՅԱՆ

2018թվականի նոյեմբերի 02
Տարոնիկ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

---

ԹԻՎ-64

05 նոյեմբերի 2018թ.

# ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հեդվածի 1-ին մասով և << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 33-րդ հոդվածի 17-րդ կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. 2018 թվականի դեկտեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընտրություններին Տարոնիկ համայնքում տեղամասային կենտրոն սահմանել՝
2. Տարոնիկ համայնքի Գ.Գառնիկյանի անվան միջնակարգ դպրոց՝ Գ.Գառնիկյան N 23:
3. Տարածքին տիրապետող Ա.Հակոբյան:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել լիազոր մարմին, թիվ 15/33 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով և տարծքի տիրապետողին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԽԼՂԱԹՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 05
Տարոնիկ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---

ԹԻՎ-65

05 նոյեմբերի 2018թ.

## ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՀԱՏՈՒԿ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Ընտրական օրենսգրքի>> 21-րդ հոդվածի 3-րդ մասով.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի կայանալիք 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրություններին քարոզչական պաստառներ փակցնելու համար Տարոնիկ համայնքի տարածքում առանձնացնել անվճար տեղեր:
2. Նշված տարածքները թեկնածուների միջև կբաշխվեն հավասար մակերեսներով: Հ.Բաղրամյան 2 հասցեում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունված պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԽԼՂԱԹՅԱՆ

2018 թվականի նոյեմբերի 05
Տարոնիկ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 նոյեմբերի 2018թ. Թիվ 66

## ԱՆՎՃԱՐ ԴԱՀԼԻՃՆԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի երկրորդ մասով, 2018թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի արտահերթ ընտրություններին նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողներին հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել անվճար դահլիճ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԽԼՂԱԹՅԱՆ

2018 թվական նոյեմբերի 05

Տարոնիկ համայնք

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Տարոնիկ համայնքի ղեկավարի
2018 թվականի նոյեմբերի 05-ի N-66 որոշման

ՑԱՆԿ

2018 թվականի դեկտեմբերի 9-ին կայանալիք Հայաստանի
Հանրապետության Ազգային Ժողովի արտահերթ
ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների
դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ համայնք

| Հ/Հ | Դահլիճի, շինության անվանումը | Գտնվելու վայրը(հասցեն) | Նստատեղերի թիվը | Տրամադրելու օրերը և ժամերը | Դահլիճը, շինություն տնօրինող | Այլ նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1, | Դպրոց | Գ. Տարոնիկ Գ. Գառնիկյան 23 | 30 նստատեղ | Երկուշաբթի-ուրբաթ $11^{00}$-- $18^{00}$ | Արշավիր Հակոբյան | - |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՏԱՐՈՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 նոյեմբերի 2018թ.

Թիվ- 67

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային Ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2018թ դեկտեմբերի 18–ին անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Տարոնիկ համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայողներ՝ առաջատար մասնագետներ՝ ծածկագիր /3.1-1/ Սուսաննա Ծաղոյան, ծածկագիր /3.1-3/ Արտակ Վարդանյան, և 1-ին կարգի մասնագետ ծածկագիր /3.2-1/ Սվետլանա Ավետիսյանի: Համայնքային ծառայողների ատեստավորումները:
2. Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին օրենքով սահմանված կարգով պահպանել ատեստացիայի անցկացումը:
3 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԽԼՂԱԹՅԱՆ

2018 թվական նոյեմբերի 16
Տարոնիկ համայնք